

ԱՀ զՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ՁՆԱՀԱՏՈՒՄ
6 -ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 3

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

ԱԱՀ _____


Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 21 առաջադրանք:

1-4-րդ, 10-րդ, 13-րդ և 21-րդ առաջադրանքները լրացնել:

5-րդ, 9-րդ և 16, 17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

6-8-րդ, 11, 12-րդ, 14, 15-րդ և 18-20-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը  և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ-գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ- գրքույկի առավելագույն միավորը՝ 21:

Աշխատանքի կատարման համար տրվում է 50 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

2018 - 2019

Թեստ 3
1-4-րդ առաջադրանքները լրացնել

1. Խոսքը կազմվում է _____
_____ :
2. Գրքային են կոչվում այն բառերը, _____
_____ :
3. Ձևով տարբեր, բայց իմաստով մոտ բառերը կոչվում են _____ :
4. Արտահայտությունը գրել մեկ բառով:
Գիրք, որի մեջ բառերը դասավորված են այբբենական կարգով - _____
5. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) ուրախ
- 2) հոտ

Ածանց

- ա) ուկ
- բ) ացի
- գ) ություն
- դ) ավետ

Պատասխան՝ 1-____, 2-____

6. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

Ո՞ր շարքի բոլոր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- | | |
|-------------------------------|------------------------------|
| 1) գերևարել, ուղեվճար, կաեվոր | 3) երեվոյթ, հոգևիճակ, հարևան |
| 2) արեվավառ, հետևանք, ագեվագ | 4) օթևան, թևավոր, գինեվաճառ |

7,8-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

7. Ո՞ր բառերում է գրվում *-գ-* :

1) գո...նոց, 2) ծա...ել, 3) մանրու..., 4) կողպե..., 5) պատշ...ամբ

8. Ո՞ր բառերում է արտասանվում չգրվող *-ը-* հնչյունը:

1) որսկան, 2) հնձվոր, 3) երբևէ, 4) պարզորոշ, 5) կթվոր

9. Համապատասխանեցնել.

Բառ

- 1) անուր...
- 2) խե...դել
- 3) ա...համարիել
- 4) գ...ուծ

Տար

- ա) *ը*
- բ) *ջ*
- գ) *ր*
- դ) *ղ*
- ե) *խ*
- զ) *չ*
- է) *ծ*
- ը) *ծ*

Պատասխան՝ 1-____, 2-____, 3-____, 4-____

10. Լրացնել.

«Արդար վճիռ» ստեղծագործության հեղինակն է՝ _____ :

11,12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

11. Ո՞ր բառն է համապատասխանում նախադասությանը:

Հույների զորքն ուներ երեք հարյուր երկանիվ և հարյուր հիսուն քառանիվ 1) մարտակարգ, 2) մարտակառք:

12. Ընտրել այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:

Աշխարհում մենք ենք մնալու մեր քամած 1) թեժ գինու թնդությամբ... 2) արբեցող 3) հին

13. Լրացնել աղյուսակը.

Գրել տրված բառերի գրքային տարբերակը:

Խոսակցական	Գրքային
լղար	
կոլոտ	
պուճուր	

14,15-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

14. Արցունքներիս միջով նայում եմ լուսնին, Կեսն ամպի տակ է, Իմ տատի դեմքն էլ այդպես ամպամած Ու սպիտակ է:

Բանաստեղծական տողերը գրել է

- 1) Հովհաննես Շիրազը
- 2) Վահան Տերյանը
- 3) Վահագն Դավթյան
- 4) Եղիշե Չարենցը

15. Մտորում ես դու տխուր, և օրորում է թթենին

.....
Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մա՛յր իմ անուշ ու անգին...

Բաց թողած տողն է՝

- 1) Դեմքիդ ստվեր է գցել, մա՛յր իմ անուշ ու անգին...
- 2) Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն...
- 3) Տխրությունը քո անձիր, մա՛յր իմ անուշ ու անգին...

16,17-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում

16. Դարձվածք

- 1) աշխարհով մեկ լինել
- 2) գույնը գցել
- 3) լեզու գտնել
- 4) թև առնել

Բացատրություն

- ա) շատ երկրներ շրջել
- բ) իրար հասկանալ
- գ) ճանապարհ գնալ
- դ) ուրախանալ
- ե) սփրթնել
- զ) ոգեշնչվել

Պատասխան՝ 1- ____, 2- ____, 3- ____, 4- ____

17. Ստեղծագործություն

- 1) « Անձրև »
- 2) « Իմ տատը »
- 3) « Մորս համար գազել »

Հեղինակ

- ա) Հ. Շիրազ
- բ) Վ. Անանյան
- գ) Գ. Մահարի
- դ) Ե. Չարենց
- ե) Վ. Դավթյան

Պատասխան՝ 1- ____, 2- ____, 3- ____

18-20-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

18. Իմաստով ճիշտ բացատրված բառերն են՝

- 1) ծավիլ- ծովագույն, 2) քիվ- հորիզոնական ելուստ պատերի վերին մասում, 3) վարուժան-էգ թռչուն , 4) զառամ-ծերացած, 5) ուստր- աղջիկ

19. Բազմիմաստ բառերն են՝

- 1) սալոր, 2) մեներգիչ, 3) բույս, 4) անուշ, 5) հաց

20. ամբարտավան բառին հոմանիշ են՝

- 1) համեստ, 2) մեծամիտ, 3) մեղապարտ, 4) հանցագործ, 5) գոռոզ

21. Գրել պատասխանը:

Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

Ամառային արևը կկանգներ ուղիղ զենիթում, ու մի թանձր լռություն կխտանար շուրջը: Տեսար՝ մի բզեզ թռավ, և նրա բզզոցը լսվեց օդում միլիոնավոր բզեզների թևերի բզզոցի ուժգնությամբ, կամ մի թեթև հովից Այգեստանի ծառերի տերևները շրջվեցին, և լսվեց այդ ձայնը ծովի ալեկոծության պես ալիք-ալիք թավալումով:

Պատասխան՝

_____ :

Երացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց սանդղակով	

Ստուգող՝ _____

Ա.Ա.<

ստորագրություն